

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 55/1

14 դեկտեմբերի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով Ա/Ձ Աշոտ Ստեփանյանի լիազոր ներկայացուցչի կողմից 06.12.2012թ-ի գրությամբ բերված բողոքը և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ պետի 23.11.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 211270 որոշման համաձայն, Ա/Ձ Աշոտ Ստեփանյանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հարկերը և սոցիալական ապահովության վճարի գումարները չվճարելու համար <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 10.000 դրամի:

Ա/Ձ Աշոտ Ստեփանյանի լիազոր ներկայացուցչի կողմից 06.12.2012թ-ի գրությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե բերվել է բողոք վերոգրյալ որոշման դեմ: Որից հետո Ա/Ձ Աշոտ Ստեփանյանի լիազոր ներկայացուցիչը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նախագահին հասցեագրված 14.12.2012թ-ի դիմումով բերել է միջնորդություն, որով խնդրել է, որպեսզի վերոգրյալ 06.12.2012թ-ի գրությամբ բերված բողոքը թողնվի առանց քննության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Հանձնաժողովը, ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով, գտնում է, որ Ա/Ձ Աշոտ Ստեփանյանի լիազոր ներկայացուցչի 06.12.2012թ-ի գրությամբ բերված բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Աշոտ Ստեփանյանի լիազոր ներկայացուցչի 06.12.2012թ-ի գրությամբ բերված բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ